Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ներքին Գետաշենի Ա.Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց

Թեմա՝ Համընդհանուր ներառականության առվելություններն ու բացթողումները

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Հասմիկ Միսակյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1

Ներառական կրթություն…… 4

Գլուխ 2

Համընդանուր ներառականության առավելություններ……8

Գլուխ 3

Համընդանուր ներառականության բացթողումները…… 11

Եզրակացություն…… 15

Գրականության ցանկ…… 17

Ներածություն

Հայաստանում ներառական կրթության համակարգը, որպես ազգային քաղաքականություն, պաշտոնապես ընդունվել է 2003 թվականինին: Այդ ժամանակից ի վեր տեղական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ նախաձեռնել են նոր ընդունված համակարգին համահունչ զանազան ծրագրեր՝ ուսուցիչներին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին օժանդակելու համար: Այդ ջանքերի շնորհիվ այսօր շատ դպրոցներ ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը, սակայն ուսուցիչներից քչերն են կարողանում դասարանում իրականացնել այդ երեխաների կրթական կարիքներին համապատասխան ռազմավարություններ ու ծառայություններ: Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիքն է: Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամնատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում: Դպրոցներում ներառման արդյունավետության գնահատման ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են եվրոպական երկների կողմից: Ներառական կրթության առավելություններից է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը և դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հասարակության մեջ: Այն նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ: Սակայն, այնուամենայնիվ, կան բազմաթիվ բացթողումներ և չլուծված խնդիրներ:

Ներառական կրթության բացթողումներից է.

Ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից: Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև ծնողների լիարժեք ներգրավածությունը դպրոցական

կյանքին պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան յուրաքանչյուր երեխայի դպրոցում սովորելուն:

Ճկուն ուսումնական ծրագրերի թերի լինելը. յուրաքանչյուր երեխա պետք է ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Բազմաթիվ երեխաներ մեկուսացված են, կամ դուրս են մնացել կրթական համակարգից:

Սույն հետազոտական աշխատանքի բաղկացուցիչ մասերն են բովանդակությունը, ներածությունը, 3 գլուխները, եզրակացությունը և գրականության ցանկը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

Վեր հանել ներառական կրթության առավելություններն ու թերությունները:

Փորձել առաջարկել տարբեր ուղիներ այդ թերությունները վերացնելու համար:

Գլուխ 1

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ներառական կրթությանն ուղղված առաջին քայլերը սկսել են իրականացվել դեռ 2000 թվականների սկզբներից, երբ Երևանի հանրակրթական դպրոցներից մեկի տնօրենը համարձակվեց համաձայնել դպրոց ընդունել հոգեկան զարգացման խանգարումով առաջին աշակերտին՝ դպրոցի դեռևս անպատրաստ ֆիզիկական պայմաններով, ուսումնական ծրագրերով, ուսուցչական և մասնագիտական կազմով: 2005 թվականին Հայաստանում ընդունվեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին օրենքը, որով ներառական կրթությունն ընդգրկվեց ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ: 2012 թվականին ՀՀ Ազգային Ժողովի կողմից հաստատվեց հանրակրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, ըստ որի՝ ներառական կրթության մասին օրենքը դարձավ հանրակրթության օրենքի մի մաս, դրանով հանրակրթական համակարգում որդեգրվեց համընդհանուր ներառականությունը, այսինքն՝ բոլոր հանրակրթական դպրոցները պետք է պատրաստ լինեն իրականացնելու ներառական կրթություն: Համընդհանուր ներառականությունը կյանքի կոչելու համար վերջնաժամկետ սահմանվեց 2022 թվականը, որը հետագայում երկարաձգվեց մինչև 2025 թ.-ը՝ ելնելով ոլորտում առկա խնդիրներից ու բացթողնումներից: Առաջնային հիմնախնդիրներից է հանդիսանում մարդկային ռեսուրսների վերապատրաստումը: Չնայած մեր երկրում իրականացվող մեծածավալ կրթական բարեփոխումներին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հետ իրականացված զրույցի ընթացքում նրանց կողմից արտահայտած մեծ մտավախություններից է իրենց երեխայի ճակատագիրը դպրոցից հետո: Սակայն ծնողները, ովքեր քաջ գիտակցում են իրենց երեխայի ինքնուրույնություն ձեռք բերելու կարևորությունը, այնուամենայնիվ, երեխային ինքնուրույն կյանքի նախապատրաստելը համարում են շատ դժվար և աջակցություն պահանջող հարց:

Հաշմանդամություն ունեցողներին ծաղրելը, չընդունելը դաստիարակության խնդիր է. նախ ընտանիքը պետք է պատրաստի երեխային, իսկ հետո արդեն դպրոցը: Սակայն

ներառական կրթությունն ունի թե՛ իր դրական, և թե՛ բացասական կողմերը: Դրականն այն է, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն դեռ փոքր տարիքից ինտեգրվում են հասարակությանը, ադապտացվում պայմաններին: Սակայն պետք է հաշվի առնել, թե արդյոք իրենք իրենց ֆիզիոլոգիական և մտավոր հնարավորություններով կարող են հասնել այն ռիթմին, որն ունեն դասարանի մյուս երեխաները, պետք է շատ նրբորեն աշխատել, որ չտուժի այն մարդն, ով չունի այդ խնդիրները: Պետք է հոգեբանական խմբի շատ լուրջ և փոխհամաձայնեցված աշխատանք տանել: Խիստ կարևոր է մանկավարժի արհեստավարժությունը, ով բացի ակադեմիական գիտելիքների հսկայական պաշար ունենալուց, նախ և առաջ, պետք է ունենա մանկավարժական և հոգեբանական գիտելիքներ և հմտություններ: Պետք է երկկողմանի նեցուկ լինել թե՛ հաշմանդամություն ունեցողներին, թե՛ մյուսներին: Պահանջվում է երեխայի հոգեկան աշխարհը անխախտ պահելու շատ նուրբ մոտեցում: Հնարավոր է երեխայի մոտ մեղքի զգացում առաջանա՝ տեսնելով հաշմանդամություն ունեցողին, խղճահարության գործոնն այս պարագայում պետք է վերացնել:Մենք կարող ենք վնասել երեխաների հոգեկան աշխարհը: Երեխաների համար կապ չպիտի ունենա, թե իր դիմացի անձնավորությունը ինչ խնդիր ունի, ինչ տեսք ունի, կարևորը՝ իրենց խաղընկերն է, իրենց հետ հավասար կարող է խաղալ, նստել նույն նստարանին:

Բարեբախտաբար, այժմ պատկերը բավականին այլ է, և զգալի են դրական տեղաշարժերը հասարակության ընկալման և վերաբերմունքի մեջ: Անշուշտ, ոլորտում նշանակալի բարեփոխումներ են կատարվել՝ շնորհիվ իրենց գործին նվիրյալ անհատների և ծնողների, ովքեր պայքարել են իրենց երեխաների կրթության իրավունքի և կյանքի որակի բարելավման համար:

Ներառման պայմաններում ուսումնական գործընթացում տեխնոլոգիաների կիրառումը, ժամանակակից դիրքորոշումներից ելնելով, պահանջում է ոչ միայն կրթության բովանդակության և խնդիրների փոփոխություն, մի սերնդից մյուսի սոցիալական փորձի փոխանցում, այլև անձի զարգացման համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծում: Ներառական կրթության տեխնոլոգիաները հիմնվում են հանրակրթության հայեցակարգերի հետևյալ դրույթների վրա: Ամբողջականության սկզբունքի պահպանումը պահանջում է լրացուցիչ շտկողակրթական ծառայությունների կարիք ունեցող սովորողների

յուրահատկությունների և հնարավորությունների ուսումնասիրում, մանկավարժության ու հոգեբանության զինանոցից վերցված բազմազան մեթոդների, հնարների ու միջոցների կիրառում: Տեխնոլոգիաները կրթական ներառման պայմաններում ունեն հետևյալ բնութագրիչները.

- Նախագծվում, ընտրվում է հոգեֆիզիկական յուրահատկություններով սովորողի կրթության բովանդակությունը: Այն ազատվում է երկրորդական բաղադրիչներից: Դա թեթևացնում է սովորողների բեռնվածությունը, հնարավորություն ընձեռում բազմակի անգամ անդրադառնալ ծրագրային նյութի գլխավոր և էական մասերին:
- Ներառման պայմաններում իրականացվում է կրթության հաղորդակցական բաղադրամասի ապահովումը: Իսկ դա ենթադրում է կրթական գործընթացի մասնակիցների փոխգործունեություն, մեկը մյուսի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի առկայություն, սոցիալական փորձի փոխանակում:
- Օգտագործվում են տարբերակված կրթական ծրագրեր, որոշվում են սովորողի կրթական երթուղին՝ հաշվի առնելով մի շարք գործոններ: Դրանցից են կենսամիջավայրը, ծնողների մանկավարժական կուլտուրան, սովորողների իմացական հնարավորությունները, ինչպես նաև օգտագործվող մեթոդական այն հնարները, որոնց կիրառումը երաշխիք է անձի զարգացման միջոց հանդիսացող կրթական միջավայրի ստեղծման համար:

Ներառական կրթական տեխնոլոգիաների յուրահատկությունը կրթական ընդունված համակարգերի և արտաքին միջավայրի հետ մշտական փոխգործունեության մեջ լինելն է: Դա հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն գնահատել յուրաքանչյուր փաստն ու երևույթը, ընդունել այլ մարդկանց աշխարհը, տեսկետը և հայացքները: ԱՄՆ-ի դպրոցներում, հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման հիմնահարցերով զբաղվող հաստատություններում մեծ ուշադրություն են դարձնում նշված բաղադրիչներին՝ դրանք ընդգրկելով անհատական ուսուցման և այլ պլանների մեջ, և երեխայի անձի ձևավորման առանցքում դնում են նրա ինքնորոշումը: Դրա հետ մեկտեղ աշակերտներին սովորեցնում են ընտրություն կատարելիս հաշվարկել սեփական հնարավորությունները, ինչպես նաև իրենց ընտրությունից և կայացրած

որոշումներից բխող ռիսկերը, որ այդ դեպքում կարող են նաև անհաջողության հանգեցնել: Սրանով ձևավորում են սեփական որոշումները կայացնելիս դրանց համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն, այն անդրադառնում է «Ես» կերպարի և ադեկվատ ինքնագնահատականի ձևավորման վրա: Դրան զուգահեռ սովորեցնում են հարգել ուրիշներին, լսել նրանց կարծիքը: Գոյություն ունեն հաշմանդամություն ունեցող անձանց ինքնորոշման ձևավորմանն ուղղված մշակված արդյունավետ մեթոդներ, որոնք կիրառվում են որպես ամբողջական ծրագրեր և ընդգրկված են ԱՄՆ-ի դպրոցներում, տարբեր հաստատությունների գործունեության պլաններում, և այսօր դա տալիս է իր արդյունքները: Վերջիններս տեսանելի են այն հարցերում, որ հենց հաշմանդամություն ունեցող անձինք են այսօր իրենց իրավունքների և բարեփոխումների պահանջատերերը, սեփական իրավունքներից քջատեղյակ լինելով, դառնում են սեփական շահերի պաշտպան: Այսպիսով, համատարած ներառականության արմատավորման համար անհրաժեշտ են ոչ միայն դրան ուղղված օրենքների ընդունումը, ինչը նշանաակում է գործընթացի իրականացում վերևից ներքև, այլև դրա՝ ներքևից վերև իրականացման խթանում, որը հնարավոր է հաշմանդամություն ունեցող անձանց ինքնորոշման ձևավորմամբ, ովքեր կդառնան պահանջատեր փոփոխությունների համար: Այս գործընթացը պետք է սկսել ընտանիքներից և դպրոցներից, այն ինստիտուտներից, որոնք դաստիարակում և կրթում են հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Գլուխ 2

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներառական կրթությունը մեծ օգուտներ ունի ինչպես հաշմանդամություն ունեցող երեխաների, այնպես էլ այն երեխաների համար, ովքեր որևէ տեսակի հաշմանդամություն չունեն: Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Կրթության ներառականության դեպքում շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը:

Ներառական կրթությունը հաջողում է, երբ կա լավ պլանավորում, աջակցություն և նվիրվածություն այն մասնագետների կողմից, ովքեր աշխատում են երեխաների հետ: Ներառված դասարանում մենք սովորում ենք հասկանալ և հարգել բազմազանությունը, լսել միմյանց ամենատարբեր կարծիքները:

Բոլորը միշտ սովորում են և յուրաքանչյուր ոք կարող է սովորել յուրաքանչյուրից:

Ներառական դպրոցների ստեղծումը բարելավում է մի շարք ոլորտներ.

•Կրթության որակի բարելավում.

Համատեղ ուսուցման պահանջը մղում է նոր մեթոդների որոնման, որոնք կարող են համապատասխանել բոլոր երեխաների պահանջներին՝ անկախ տարիքից և առանձնահատկություններից և դրանցով պայմանավորված խնդիրներից: Հանրապետության բոլոր բուհերի մագիստրոսի կրթական ծրագրում դասավանդվում է «Համընդհանուր ներառական ուսուցման մեթոդաբանություն» կամընտրական առարկան, պարտադիր էր մանկավարժական համապատասխան որակավորման և ուսումնական հաստատությունում ուսուցիչ և դասղեկ լինելու համար: Ուսանողների ուսումնական պրակտիկայի հիմնական բաղադրիչներից մեկը դարձավ ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատելու հմտություններ ձեռքբերելը, ինչը կարող է նպաստել նրանց հետագա գործունեության աարդյունավետությանը:

• Երեխայի սոցիալականացում.

Ներառական դպրոցներն ունակ են փոխելու հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության և խտրականության հանդեպ, բոլոր երեխաներին միասին ուսուցանելու ճանապարհով նրանք կարող են ձևավորել արդար, խտրականությունից զերծ հասարակության ստեղծման հիմքերը:

- **Ներառումը ի շահ տնետսության.**

Անհամեմատ մատչելի է հիմնել և պահել համատեղ ուսուցմամբ դպրոցներ, քան ստեղծել տարբեր խմբերի երեխաների համար մասնագիտացվող տարբեր տիպի դպրոցական համալիրներ: ԿԱՊԿ ունեցող սովորողներին հատկացվող ֆինանսավորումը որակյալ կրթական ծառայություններին միտված լինելուց զատ, կարող է մղվել ֆիզիկական հասանելիության ապահովմանը:

Ներառական կրթության իրավական հիմքերը.

1. Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատությունն ընտրելու իրավունք:

2. Ներառական կրթություն՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում:

3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդություններին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք:

4.Պետությունը և նրա համապատասխան մարմինները հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխային երաշխավորում են անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին համապատասխանող բազային և մասնագիտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, սոցիալական վերականգնում, լիարժեք կյանք՝ նպաստելով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակական կյանքին:

Նման երեխաները կարող են իրենց ցանկությամբ սովորել հանրակրթական դպրոցներում:

5.Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշմանդամ երեխաներն ունեն հաշմանդամության սայլակների, հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների ու բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացի թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզներից) և հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական այլ սարքերի (առարկաների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Վերը նշված առավելություններից զատ, կարևոր ենք համարում ներկայացնել ներառական կրթության մի քանի դրական կողմ ևս.

Շատ կարևոր է հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի դերը ներառական կրթություն իրականացնելու ճանապարհին: Հարկ է նշել, որ կառույցը միշտ պատրաստակամ է աջակցություն ցուցաբերել, իրեն հղվող ցանկացած հարցի և խնդրի դեպքում: ՀՄԿ-ն իր և ենթակայության ներքո գործող ՏՄԱԿ-ները պատրաստակամորեն իրականացնում են խորհրդատվություն և աջակցություն բոլոր դպրոցներին, ուսուցիչներին և աշակերտներին: Բացի հաճախակի կազմակերպվող վերապատրաստումներից ՀՄԿ-ն նաև աջակցություն է ցուցաբերում դպրոցներին մենթորների միջոցով: Միշտ պատրաստակամ է նոր առաջարկություններ լսել, իսկ խելամիտ առաջարկները նաև իրագործել ի նպաստ ներառական կրթության ամրացմանը և իրականացմանը:

- Բոլոր երեխաները կարող են դառնալ իրենց համայնքի մի մասը և գիտակցել պարտականությունները այդ համայնքի նկատմամբ:
- Ներառականության դեպքում ունենք ավելի լայն ուսուցման հնարավորություններ և ամենատարբեր մեթոդների որոնման անհրաժեշտություն: Տարբեր ունակություններ ունեցող երեխաների հավասար պայմանների ապահովումը բերում է ուսուցման մեջ մոտիվացիայի բարձրացմանը:

- Ներառական կրթությունը բոլոր երեխաներին հավասար հնարավորություն է տալիս զարգացնել երևակայությունը և բացահայտել իրենց մեջ նոր տաղանդներ:
- Այն թույլ է տալիս երեխաներին աշխատել անհատական նպատակների վրա, իրենց տարիքի այլ աշակերտների հետ միասին:
- Խրախուսում է ծնողների մասնակցությունը իրենց երեխայի կրթական գործընթացում և դպրոցական առօրյայում:
- Ներառական կրթությունը խթանում է հարգանքի և փոխզիջման մշակույթի ձևավորմանը: Այն նաև հնարավորություն է ընձեռում ծանոթանալու անհատների տարբերություններին և ընդունելու այդ տարբերությունները:
- Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս սովորողի մոտ ձևավորել ընկերասիրություն: Ընկերությունն էլ իր հերթին նպաստում է մի շարք կարևոր դրական արժեքների ձևավորմանը:

Գլուխ 3

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

Ցանկացած նորարարություն իր ներդրման, զարգացման, կայացման ճանապարհին հանդիպում է բազմաթիվ դժվարությունների և խնդիրների: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 2025 թվականը նախատեսվում է, որ Հայաստանը անցում կկատարի ամբողջական և համընդհանուր ներառական կրթական համակարգի: Սակայն պետք է փաստել, որ ներառական կրթությունը ունի նաև մի շարք բացթողումներ և խնդիրներ:

1. Ներառական դպրոցները չունեն ներքին հարմարեցվածություն.

Թեքահարթակներ պետք է լինեն շենքից դուրս և ներս, սակայն հիմնականում այն կարող ես տեսնել դպրոցի առաջին հարկում: Ոչինչ նախատեսված չէ այն երեխայի համար, որն ունի հենաշարժողական խնդիրներ ու իր դասասենյակը գտնվում է 3-րդ հարկում: Որոշ երեխաներ հրաժարվում են դպրոց հաճախել հենց նման խնդիրների պատճառով: Այսօր ներառական դպրոցներ հաճախում են հիմնականում թեթև և միջին խնդիրներ ունեցող երեխաները:

2. Ներառական դպրոցներում սանհանգույցները հարմարեցված չեն:

Հիմնականում տիպային դպրոցական սանհանգույցներ են, որոնցից շատերն էլ անմխիթար վիճակում են:

3. Ներառական դպրոցները չունեն հարմարեցված սպորտդահլիճներ և մասնագետ-ուսուցիչներ, ովքեր կաշխատեն ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ:

4. Ներառական դպրոցներում կա մասնագիտական ռեսուրսների պակաս.

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ պետք է աշխատի տարբեր մասնագետներից բաղկացած թիմ, որը պետք է բխի երեխայի շահերից, աշխատի մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Անկախ երեխաների թվից և կրթության առանձնահատուկ պայմանի կարիքների բնույթից՝ դպրոցը պետք է ունենա ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ:

6. Ուսումնական ծրագրերի հարմարեցում.

ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատանքի մեթոդները դեռևս հստակեցված և կիրառելի չեն: Շարունակում է տարածված մնալ ԿԱՊԿ ունեցող երեխայի հետ դասաժամերին «ծաղիկ կտրելը»: Երեխան կարող է ներկա լինել բոլոր դասաժամերին, բայց նրա հետ զբաղվի հոգեբանը կամ ուսուցչի օգնականը: Երբեմն առարկայական ուսուցիչները առանձնահատուկ ուշադրություն չեն դարձնում սովորողի անհատական ուսուցման պլանին, ինչը միտված է ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթությունը առավել մատչելի և արդյունավետ կազմակերպելուն:

7.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդունում են ոչ լիարժեք և անընդունակ:

Հասարակության մի ստվար զանգված դեռ կարծում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին դպրոց բերելը, խոչընդոտում է մյուս սովորողների կրթական գործընթացին և խանգարում դպրոցի բնականոն գործունեությանը:

8.Դպրոցները կրթական գործընթացում ծնողներին հազվադեպ են ընդգրկում իրենց գործունեության մեջ՝ թերագնահատելով նրանց ներուժը: Ծնողները երբեմն հրաժարվում են դպրոցական կյանքին մասնակից լինելուց: Իրենց կարծիքով բավարար չեն տիրապետում դպրոցում իրականացվող գործընթացներին: Ինչպես նաև մեծ աշխատանք կա տանելու դպրոց-ծնող կապը ամրացնելու ուղղությամբ: Ծնողների կապը դպրոցի հետ մեծամասամբ սահմանափակվում է ծնողական ժողովներին և կազմակերպված միջոցառումներին ներկա գտնվելով: Ծնողները բավարար չափով տեղեկացված չեն ուղղորդման անհրաժեշտության և մեխանիզմների մասին:

Մեր կարծիքով դպրոց-ծնող կապը առավել ամուր հիմքերի վրա դնելու միջոցներից մեկը, հաճախակի հանդիպումներն են ծնողների հետ: Ընդունված ձևից տարբերվող ծնողական ժողովների կազմակերպումն է, ինչը իրենից ենթադրում է ծնողական ժողովի միջոցով նրանց հաղորդակից դարձնել դպրոցական կյանքին: Կարելի է նաև ծողների անմիջական մասնակցությամբ տարբեր ձևաչափերով դասեր կազմակերպել: Ծնողների հաղորդած տեղեկությունը աշակերտների մասին, կարող է ուղղորդել ուսուցչին, առավել արդյունավետ կազմակերպել որոշ երեխաների ուսուցումը: Դպրոցի հետ հաճախակի շփումը ծնողներին կարող է մոտիվացնել և պարտավորեցնել երեխայի հետ ամենօրյա դասապատրաստումն իրականացնելիս:

9.Ներառական կրթության բացթողումներից է նաև մարզերի մեծամասնությունում համապատասխան կենտրոնների սակավությունը կամ ամբողջական բացակայությունը: Կենտրոնների գործելու դեպքում էլ նկատվում է նեղ մասնագետների պակաս: Հարմարեցված տրանսպորտը իսպառ բացակայում է և հենաշարժողական համակարգի խնդիրների առկայության դեպքում հասարակական տրանսպորտով տեղափոխվելը դառնում է անհնար: Գյուղերի բնակիչները տրանսպորտային խնդրի պատճառով չեն կարողանում հաճախել նախակրթարաններ և կենտրոններ: Հաճախ մի քանի տրանսպորտ փոխելու անհարմարությունից խուսափելու համար ծնողն ընտրում է տնային ուսուցման տարբերակը: Շատերը անգամ հատուկ սայլակ կամ քայլակ չեն կարողանում ձեռք բերել: Գյուղական համայնքներում բացառվում է, որ տրանսպորտը կարող է օգնել խնդիրներ ունեցող երեխաներին:

Առաջնային ենք համարում պատկան մարմինների ուշադրությունը հրավիրել գյուղական համայնքներում այս խնդիրը հնարավորության սահմաններում լուծելու վրա։

Մարզերում գործող մեկ կամ երկու մանկավարժահոգեբանական աջակցության կենտոնները չեն կարող բավարարել տվյալ մարզում աջակցության կարիք ունեցող սողորողներին։ Մեկ կենտրոնը մարզի համար բավարար չէ, տարածքային առումով կտրտվածությունը մեծ է, քանի որ միջհամյանքային տրանսպորտը կաթվածահար վիճակում է։

10. Ներառական կրթությունը գրեթե բացակայում է նախակրթարանում։

Ներառական կրթությունը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ապահովելու լավագույն տարբերակներից մեկն է։ Այն հնարավորություն է տալիս ծանոթանալ բազմազան միջավայրին, զարգացնել միջանձնային փոխհարաբերությունները, կառուցելու կարողություններն ու հաղորդակցման հմտությունները։ Ներառական կրթության հիմնական նպատակն է երեխաների շրջանում միմյանց նկատմամբ հարգանք սերմանել, ինչպես նաև միմյանց բազմազանությունը ճանաչել։ Երեխաները, կրթվելով բազմազանության միջավայրում, ունենում են տարաբնույթ ձեռքբերումներ, դրական լիցքեր են ստանում մեկը մյուսից, լրացնում են միմյանց։ Բազմազանությունը կարող է դրսևորվել տարբեր կերպ և տարբեր մակարդակներում՝ սկսած ազգային կամ կրոնական փոքրամասնություններից, վերջացրած զարգացման խանգարումներով կամ օժտվածությամբ։ Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս տարբերվող երեխային հայտնվել իր հասակակիցների միջավայրում և նրանց հետ միասին ստանալ երեխայի վաղ զարգացման համար խիստ կարևոր նախադպրոցական կրթություն։ Ներառական կրթություն իրականացնող նախադպրոցական ուսումնական հաստատությունները պետք է պատրաստ լինեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան երեխային մասնակցել ցանկացած գործունեության, համագործակցել, ուսումնասիրել, խաղալ և սովորել իր հասակակիցների հետ։ Երեխաները սովորում են՝ հաղորդակցվելով միմյանց հետ, ճանաչում են աշխարհը, ընկալում այն իրենց երևակայության սահմաններում սավառնող ողջ գույներով ու

երանգներով, իսկ մանկավարժն այս գործընթացում դառնում է պարզապես խաղընկեր և ուղղորդող: Այս ներառական միջավայրում կարևոր է գիտակցել բոլոր սովորողների եզակի և փոփոխվող կարիքներին արձագանքելու անհրաժեշտությունը:

Մանկուց ներառումը շատ կարևոր է, իհարկե, որքան վաղ հասակից երեխան ներառվի հասարակությանը այնքան ավելի դյուրին կլինի ընկերների հետ շփումը նաև հետագա տարիներին, և այս ոլորտում հասարակության առաջ դրված ներկայիս խնդիրներն ավելի քիչ կլինեն: Շատ հաճախ մեծահասակները հենց իրենք են պիտակավորում երեխաներին, օրինակ՝

- Ձեր դասարանի այս ինչ երեխան այս ինչ տեսքն ունի, կաղում է, սայլակ է օգտագործում և այլն: Ավագ սերնդի մոտ կարծրատիպային այս մտածելակերպն ու պիտակավորումները համարվում են խորհրդային տարիների ժառանգություն: Կար տարածված միֆ, թե խորհրդային հասարակությունը միայն առողջ, առանց մտավոր և ֆիզիկական խնդիրների անձանցից պետք է բաղկացած լինի: Մարդիկ հենց իրենք էլ ամոթ էին զգում ընտանիքում խնդրով երեխայի ծնունդից և ամեն կերպ թաքցնում էին նրանց հասարակության աչքից: Հասկանալի է, որ տարեց մարդկանց համար ներառականության գաղափարը շատ խորթ է, քանի որ տարիներ առաջ սա շատ փակ թեմա էր, իրենք գրեթե չէին հանդիպում հաշմանդամություն ունեցողների, այդ պատճառով էլ այժմ կարծրատիպային մոտեցումը մեծ է հատկապես ավագ սերնդի մոտ:

Եզրակացություն

Ամփոփելով մեր կատարած հետազոտական աշխատանքը՝ կարող ենք ասել,որ Հայաստանում ներառական կրթությանն ուղղված առաջին քայլերը սկսել են իրականացվել դեռևս երկու տասնամյակ առաջվանից: 2005 թվականին Հայաստանում ընդունվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին օրենքը, որով ներառական կրթությունն ընդգրկվել է ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ: 2012 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվել է հանրակրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, ըստ որի ներառական կրթության մասին օրենքը դարձել է հանրակրթության օրենքի մի մաս՝ դրանով հանրակրթական համակարգում որդեգրելով համընդհանուր ներառականությունը: Ինչը ենթադրում է, որ բոլոր հանրակրթական դպրոցները պետք է պատրաստ լինեն իրականացնելու ներառական կրթություն: Համընդհանուր ներառականությունը կյանքի կոչելու համար վերջնաժամկետ էր սահմանվել 2022 թվականը, որը, ելնելով ոլորտում առկա խնդիրներից ու բացթողնումներից, հետագայում երկարաձգվել է մինչև 2025 թվականը: Կարող ենք փաստել, որ ներառական կրթությունն այս տարիների ընթացքում հսկայական աշխատանք է կատարել կրթության որակի բարելավման ուղղությամբ: Կարող ենք ասել, որ ստացված ներառականության հիմքերը պետք է դրվեն ընտանիքներում, շարունակվեն նախակրթարանում ու զարգանան դպրոցում և բոլոր այն կառույցներում, որոնք որևէ կապ ունեն ոլորտի հետ:Անհերքելի փաստ է, որ ներառական կրթությունը մեծ օգուտներ ունի ինչպես հաշմանդամություն ունեցող երեխաների, այնպես էլ այն երեխաների համար, ովքեր որևէ տեսակի հաշմանդամություն չունեն: Ներառական կրթությունը, ապահովելով բազմազանություն, յուրաքանչյուր սովորողին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իր համայնքում՝ չմեկուսանալով ընտանիքից: Ներառական դպրոցներն փոխում են հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության և խտրականության հանդեպ, բոլոր երեխաներին միասին ուսուցանելու ճանապարհով նրանք կարող են ձևավորել արդար, խտրականությունից զերծ հասարակության ստեղծման հիմքերը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ պետք է աշխատի տարբեր մասնագետներից բաղկացած թիմ, որը

միտված պետք է լինի երեխայի շահերին, աշխատի մեկ ընդհանուր գաղափարի շուրջ։ Անկախ երեխաների թվից և կրթության առանձնահատուկ պայմանի կարիքների բնույթից՝ դպրոցը պետք է ունենա ընդհանուր կրթության

մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ: Կարծում ենք, որ ներառական կրթության լիարժեք իրականացման ճանապարհին անհամեմատելի մեծ է առարկայական ուսուցիչների դերը: Նրանց պատրաստակամության, բազմազանությունն ընդունելու կարողության, զանզան մեթոդներ որոնելու և կիրառելու արդյունքում մենք կունենանք իսկապես ներառված դպրոցներ և իրականում կմատուցվի ներառական կրթություն: Մեր կարծիքով դպրոցը բավարար քայլեր չի ձեռնարկում ծնողների կապը դպրոցի հետ ամրացնելու ճանապարհին: Եթե ծնողները որոշակի մասնակցություն ունենան դպրոցական առօրյային և իրականացվող կրթությանը, կարծում ենք կբարձրանա սովորողների առաջադիմությունը և նրանց որոշակի զանգվածի մոտ կձևավորվի աշակերտին վայել վարք դրսևորելու հմտությունը:

Որպես մեծահասակներ՝ մենք հասկանում ենք, թե որքան բազմազան է աշխարհը, և որքան վաղ ենք մենք հնարավորություն ունենում ծանոթանալ այդ բազմազանությանը, այնքան ավելի մեծ է լինում մեր փորձը և այնքան լայն՝ մեր աշխարհայացքը:

Ամեն ինչ կարելի է շտկել, եթե տարվի համատեղ, մեկ ընդհանուր գաղափարի շուրջ համախմբված աշխատանք: Արդյունավետ ներառական կրթություն իրականացնելու գործում մեծ նշանակություն ունեն թիմային աշխատանքի կազմակերպումն ու մանկավարժական անձնակազմի սերտ համագործակցությունը:

Գրականության ցանկ

1. Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. – Երևան, 2018

2. 1998 - 2022 Առավոտ – Լուրեր Հայաստանից

3. Ներառական կրթության իրականացման ուղեցույց, Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար, Երևան , 2008

4. Բաթոյան Զ. Ներառական հանդիումների կազմակերպման ուղեցույց: http://www.un.am/up/library/Inclusive_Meetings_Guidelines_Arm.pdf

5. Ուղեցույց հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթության և կողմնորոշման ծառայությունների. Գլխ.խմբագիր Սարատիկյան Լ., Երևան 2014, http://life-isability.am/Docs/Publications /Annex%205.%20PWD%20Proforientation_ Manual.pdfhttps://www.aravot.am/2015/11/16/629432/

6. https://www.formacionyestudios.com

7. https:org>cuales-son-las-ve…

8. dpir.am/hy/node/1710

9. https://hmk.am/wp-content/uploads/2021/03/dzernark-mankavarjneri-hamar.pdf

10. http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94683

11. https://hmk.am/wp-content/uploads/2020/10/%D5%80%D5%B8%D5%A4%D5%BE%D5%A1%D5%AE-%D4%BB%D5%B6%D6%84%D5%B6%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6_Karapetyan_L.pdf

12. https://hmk.am/wp-content/uploads/2021/04/Town-hall-_report-%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6.pdf